**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ**
**ՈՐՈՇՈՒՄ N 7/4**

26-ը մայիսի 2016 թվականի

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ (2016-2021ԹԹ.)» ԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌՆՉՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Առաջնորդվելով ԵՊՀ 2016 – 2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի 4.1՝ «Զարգացնել դասախոսական կազմի ներուժը» խնդրի դրույթներով՝ ԵՊՀ գիտական խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Կրեդիտային համակարգով պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը (2016-2021թթ.)» և «Երևանի պետական համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպման կանոնակարգ» փաստաթղթերը՝ ըստ ներկայացված նախագծերի:
2. 2016/2017 ուսումնական տարվանից ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման գործընթացը կազմակերպել ըստ հաստատված ծրագրի և կանոնակարգի՝ հնգամյա շրջափուլով (2016-2021թթ.):
3. ԵՊՀ հետբուհական լրացուցիչ կրթության վարչությանը և ֆակուլտետներին՝ մշակել դասախոսների որակավորման բարձրացման ծրագրի դասընթացների ցանկերը և առարկայական ծրագրերը՝ փաստաթղթերում սահմանված պահանջներին համապատասխան:
4. ԵՊՀ հետբուհական լրացուցիչ կրթության վարչությանը՝

   4.1. 2016թ. սեպտեմբերին հաստատման ներկայացնել ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման հեռանկարային պլանը (2016-2021թթ.) և ԵՊՀ որակավորման բարձրացման խորհրդի կազմը,

   4.2. Ծրագրի իրականացման վերաբերյալ ամենամյա տեղեկատվություն ներկայացնել ԵՊՀ գիտխորհրդին ուսումնական տարվա սկզբին:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ